

ՈՒՍՈՒՑԻՉԸ

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի հիմնադիր-խմբագիր Էդվարդ Ջրբաշյանի մասին որպես գրականության տեսության և պատմության բազմալստակ մասնագետի, իբրև վաստակաշատ մանկավարժի ու քաջահմուտ խմբագրի մինչև օրս բավական շատ է գրվել ու, վստահ եմ, այսուհետև ևս գրվելու է: Բայց խոստովանենք, որ նման դեպքերում, իբրև կանոն, անտեսվում կամ պարզապես ստվերվում է ... Մարդը, մինչդեռ մեր օրերում դա շատ ու շատ կարևոր է: Հաշվի առնելով հենց այս հանգամանքը, որպես Էդվարդ Ջրբաշյանի խմբագրական գործի շարունակող, ցանկանում եմ համառոտակի ներկայացնել Մարդ Ջրբաշյանին:

Թեև բախտ չեմ ունեցել լինելու Էդվարդ Ջրբաշյանի սանը, բայց հանգամանքների բերումով նրան համարում եմ իմ լավագույն ուսուցիչներից մեկը, քանզի իսկական ուսուցիչը մնում է այդպիսին մահ լսարանից դուրս:

Իբրև արտալսարանային ուսուցիչ Էդվարդ Ջրբաշյանն ինձ դասեր է տվել ոչ թե հայ գրականության պատմություն կամ գրականության տեսություն իր ավանդած դասընթացներով, այլ մարդկային բարձր վերաբերմունքով: Անշուշտ, այսօր դժվար է, եթե չասեմ՝ անհնար է, մեկ առ մեկ հիշել ու վերարտադրել ավելի քան քառասնամյա շփումների ընթացքում նրանից ստացածս բոլոր դասերն ու օրինակները, ուստի դրանց մասին դյուզն-ինչ պատկերացում տալու համար փորձեմ ներկայացնել իմ կյանքում վճռորոշ նշանակություն ունեցած չորս դեպք՝ հետևելով իր իսկ օրինակին. 1982 թ. հրատարակած իր լավագույն գրքերից մեկը վերնագրել էր «Չորս գագաթ», որտեղ 19-20-րդ դարերի ամբողջ հայ գրականությունից քննարկման առարկա էր դարձրել միայն Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի և Ե. Չարենցի բանաստեղծական ժառանգությունը:

Դեպք առաջին: Էդվարդ Ջրբաշյանին առաջին անգամ դեմ առ դեմ հանդիպել եմ 1958 թ. օգոստոսի 20-ին Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի մասնաշենքում, որտեղ նա ներկա էր որպես «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ընդունելության քննական հանձնաժողովի նախագահ, իսկ ես՝ իբրև այդ առարկայի գրավոր քննությունից ստացած «բավարար» գնահատականը բողոքարկող դիմորդ: Այդ բախտորոշ պահի մասին մոտավոր իսկ պատկերացում կազմելու համար հարկ եմ համարում ասել հետևյալը. անցած հիսունհինգ տարիներին բուհական ընդունելության քննությունների դաշտում շատ ու շատ նորամուծություններ են կատարվել, բազում և բազմապիսի օրենքներ են ընդունվել, որոնք դժվարացրել կամ հեշտացրել են ընդունելության կարգը, բայց այն, ինչ տեղի էր ունեցել այդ թվականին տվյալ տարվա միջնակարգ դպրոցավարտների հանդեպ, իր դաժանությամբ մինչև օրս

մնում է անգերազանցելի: Բավական է ասել, որ մինչ այդ մեդալակիրները մասնագիտական առարկայից թեկուզ «լավ» (չորս) ստանալու դեպքում ընդունվում էին մեկ քննությամբ, իսկ այդ տարի նույնիսկ «գերազանց» ստանալու դեպքում պետք է հանձնեին բոլոր քննությունները և միայն հավասար միավորների դեպքում ստանում էին առավելություն: Մինչ այդ լինում էին նաև այսպես կոչված «ազատ ունկնդրի» կարգավիճակով ընդունվողներ, այդ տարի վերացվել էր նաև դա: Վերջապես, ամենասարսափելին. ցանկացած մասնագիտության գծով հատկացված տեղերի 80 տոկոսը տրվում էր բանակից զորացրվածներին և երկու տարվա աշխատանքային ստաժ ունեցողներին, իսկ 20 տոկոսը՝ տվյալ տարվա շրջանավարտներին:

Ասեմ նաև, որ յուրաքանչյուր ֆակուլտետում (նկատի ունեմ Երևանի պետական համալսարանի ֆակուլտետները) ընդունում էին հիմնականում 25 հոգի, այսինքն՝ տվյալ տարվա դպրոցավարտներին հատկացված էր ընդամենը 5 տեղ, մինչդեռ այդ կարգի դիմորդների թիվը (օրինակ, պատմության ֆակուլտետում) հասնում էր 300-ի, կամ որ նույնն է՝ մեկ տեղի համար դիմել էր 60 հոգի:

Հավանաբար հաշվի առնելով այդ պայմաններում ընդունելության քննությունների հետ կապված լրջագույն դժվարությունները՝ առաջին անգամ Էդվարդ Ջրբաշյանին ստիպողաբար նշանակել էին ընդունելության քննության առարկայական հանձնաժողովի նախագահ. եթե չեմ սխալվում, դա եղավ ընդունելության քննություններին նրա առաջին ու վերջին մասնակցությունը: Գուցե իմ բախտից էր, որ այդ թվականին հենց նա՝ էր նախագահը...

Ինչևէ: Չորս քննությունից 16 միավոր հավաքածիս վիճակն այնքան անհուսալի էր, որ հարգարժան նախագահը անհիմաստ ու ավելորդ գլխացավանք համարեց պահանջն՝ պատճառաբանելով, որ միևնույնն է, 17 միավորով նույնպես չեմ ընդունվի: Բայց երբ ասացի, որ ես՝ որպես մանկավարժական ուսումնարանը գերազանցության դիպլոմով ավարտած շրջանավարտ, օգտվում եմ ոսկե մեդալակրի արտոնությունից, այսինքն՝ 17 միավոր ունեցողների թվում դառնում եմ առաջիններից մեկը, նախագահը դժկամությամբ պատասխանեց. «Լավ, գնա՛, կտեսնենք»: Քննաշրջանի ավարտին մնում էր ընդամենը 3 ժամ, իսկ բողոքարկման արդյունքը հայտնելու էին օրվա վերջում: Եթե ասեմ, որ այդ 3 ժամը ունեցավ տարիների տևողություն, իհարկե ինձ համար, ապա սուտ չի լինի: Քննաշրջանի ավարտից հաշված ընթացքում առաջ իմացա, որ գրավորիս գնահատկանը դարձրել են «լավ» (չորս): Դա, անշուշտ, էապես փոխեց վիճակս, բայց պետք է հույսի ու անհուսության սահմանագծում սպասեի ևս 5 օր՝ մինչև ընդունվածների ցուցակը փակցնելը: Թե ինչ ապրումներ ունեցա այդ օրերին, առավել ևս օգոստոսի 25-ի երեկոյան, երբ պատմության ֆակուլտետ ընդունվածների նախավերջին տողում կարդացի իմ ազգանունը, անհնար է որևէ ձևով վերարտադրել, կարող եմ ասել միայն, որ անգամ այսօր՝ 55 տարի անց, այդ ամենը, նույնիսկ ինձ, թվում է յուրատեսակ ... հեքիաթ:

Դեպք երկրորդ: Առաջին հանդիպումից անցել էր ավելի քան 8 տարի. ավարտել էի համալսարանի ասպիրանտուրան և 1966 թ. դեկտեմբերին փիլիսոփայության ամբիոնում քննարկել ու հրապարակային պաշտ-

պանության էին երաշխավորել թեկնածուական ատենախոսությունս, բայց պարզվել էր, որ անհրաժեշտ քանակությամբ տպագրված հոդվածներ չունենալու պատճառով առայժմ չէի կարող ներկայացնել պաշտպանության: Չգիտեմ ի՞նչ անվանել, ճակատագրի խափ, թե՞ Աստուծու կամք, ամբիոնից դուրս գալուն պես միջանցքում հանդիպեցի կենտրոնական մասնաշենքից մի հաստ թղթապանակ թևի տակ եկող էդվարդ Ջրբաշյանին, որը բարևելուց հետո հարցրեց. «Յը, ինչպե՞ս են գործերդ, Ջրաչի՛կ»: Լսելով կիսագոհ, կիսադժգոհ պատասխանս՝ ավստասանքով ասաց. «Իսկ ինչո՞ւ շուտ չես ասել, այս է՝ «Բանբերի» առաջին համարի նյութերն արդեն ընտրված պատրաստ են, եթե շուտ ասեիր, գուցե կարողանայի օգնել»: Ես, իհարկե, փորձեցի արդարանալ, որ սկզբում չէի իմացել, իսկ երբ իմացա ու դիմեցի խմբագրություն, ասացին, որ, ցավոք, արդեն ուշ է: Բաժանվելիս հարկ համարեց հավելել. «Այնուամենայնիվ շտապ մի բան ներկայացրո՛ւ, եթե հնարավոր լինի, կաշխատեմ օգնել»: Ես, անշուշտ, նույն օրն իսկ հետ վերցրեցի գիտական հանդեսներից մեկի խմբագրությունում ավելի քան մեկ տարի «քնած» հոդվածս և ներկայացրի «Բանբերի» խմբագրություն: Ամիսներ հետո բախտ ունեցա «Բանբերի» առաջին համարում կարդալու հոդվածս, որը հնարավորություն տվեց նույն տարվա հոկտեմբերին պաշտպանելու թեկնածուական ատենախոսությունս: Դրանով էլ սկիզբ առավ իմ սերը «Բանբերի» հանդես...

Դեպք երրորդ: Դրանից շուրջ 17 տարի հետո՝ Երևանի պետական համալսարանի հրատարակչությունում, տպագրության ընդունելով «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» մենագրությունս, խորհուրդ տվեցին, որ անպայման այն ունենա մասնագետ խմբագիր: Ստովի քննարկելով մի քանի հոգու թեկնածություն՝ հարցրեցի. «Ի՞նչ կարծիքի եք, եթե խմբագրի էդվարդ Ջրբաշյանը»: Չարցիս հարցով պատասխանելով՝ ասացին. «Իսկ նա կցանկանա՞ խմբագրել»: Իհարկե, անհիմն չէր նման մտավախությունը, որովհետև երբ մի քանի օր հետո գրքիս մեքենագիր օրինակով հայտնվեցի ՅԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենի աշխատասենյակում և սովորական հարցուփորձից հետո հայտնեցի հանդիպելուս նպատակը, առաջին պատասխանը եղավ կտրուկ մերժումը, բայց ոչ թե ժամանակ չունենալու, այլ հայ փիլիսոփայության պատմությամբ զբաղված չլինելու պատճառաբանությամբ: Երբ բացատրեցի ստեղծված կացությունը, էդվարդ Ջրբաշյանը դժվարությամբ տեղի տվեց, բայց միաժամանակ պայման դրեց, որ գիրքս կարող է կարդալ ու խմբագրել 40 օրից ոչ շուտ, ուստի մինչ այդ ես չպետք է անհանգստացնեմ իրեն: Բնականաբար սիրով ընդունեցի պայմանը և հրաժեշտ տվեցի: Անցել էր ընդամենը 10 օր, երբ քարտուղարուհին զանգահարեց ինձ և ասաց, որ էդվարդ Ջրբաշյանը ցանկանում է, որ վաղը հանդիպեմ իրեն: Ես, իհարկե, խիստ անհանգստացա՝ մտածելով, թե տեսնես ինչն է պատճառը, որ հենց ինքն էլ խախտեց իր առաջարկած պայմանը: Երբ տազնապալից գիշերվան հաջորդեց լուսաբացը և հաջորդ օրը պայմանավորված ժամին վախվորած մտա նրա աշխատասենյակ, դեմքին զգացի անթաքույց գոհունակություն, իսկ ինքը, տեսնելով անվստահ կեցվածքս, իրեն բնորոշ մեղմ ժպիտով ասաց. «Արի՛, արի՛, մի՛ անհանգստացիր, երբ սկսեցի կարդալ, որոշեցի միանգամից վերջացնել»: Դա համարելով գրքիս ընդհանուր զնահատականը՝

այնուհետև խորհուրդ տվեց անպայման ներառել նաև տեղի սղության պատճառով դուրս թողնված երկու հողված, ինչպես նաև կատարել առանձին ճշգրտումներ, շտկումներ ու լրացումներ: Ինչ խոսք, ես այդ ամենը սիրով կատարեցի, որից գիրքս էապես շահեց թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ:

Դեպք չորրորդ: 1991 թ. դեկտեմբերի 29-ին վախճանվեց ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Էդուարդ Աղայանը, որը, ի թիվս այլ պաշտոնների, նաև «Բանբերի» գլխավոր խմբագիրն էր: Ավելի քան երեք ամիս այդ պաշտոնը մնաց թափուր: 1992 թ. ապրիլի 4-ին անսպասելիորեն հրավիրվեցի համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Նորայր Առաքելյանի աշխատասենյակ և կարճատև գրույցից հետո տեղեկացա, որ նշանակվում եմ «Բանբերի» գլխավոր խմբագիր: Ասեմ՝ զարմացած էի համալսարանի նորանշանակ ռեկտորի այդօրինակ որոշումից, գրեթե ոչինչ ասած չեմ լինի, որովհետև մինչ այդ նույնիսկ իրար չէինք ճանաչում, ուրեմն ինչպե՞ս եղավ, որ որոշեց հենց ինձ նշանակել այդ դժվարին ու պատասխանատու պաշտոնում: Տարիներ հետո միայն իմացա, անշուշտ, անուղղակի ճանապարհով, որ այս դեպքում ևս որոշիչ դեր էր խաղացել Էդվարդ Ջրբաշյանի հեղինակավոր կարծիքը:

Արդեն 22-րդ տարին է, ինչ շարունակում եմ երջանկահիշատակ առաջին գլխավոր խմբագրի սկսած գործը: Չգիտեմ, կարողացա արդարացնել նրա վստահությունը, թե ոչ, բայց մեկ բան կարող եմ ասել հաստատապես. Էդվարդ Ջրբաշյանը շարունակեց թղթակցել «Բանբերին»՝ մինչև կյանքի վերջը. դրա լավագույն վկայությունը «Բանբերի» էջերում 1992-1999 թթ. նրա տպագրած 5 հոդվածներն են, որոնցից վերջինը լույս է տեսել 1999 թ. 3-րդ համարում... հետմահու:

Եվ այսպես, Էդվարդ Ջրբաշյանի հետ առաջին հանդիպումից առ այսօր անցել է ավելի քան 55 տարի, այդ ընթացքում շատ ջրեր են հոսել, շատ ու շատ արժեքներ են փոխվել, բայց ինձ համար նա մնում է ամանց մեծություն, Մարդու ու մարդկային անառարկելի օրինակ: Կարծում եմ՝ տեղին է ասել. «Հիշատակն արդարոց օրհնությանբ եղիցի»:

ՉՐԱՉԻԿ ՄԻՐԶՈՅԱՆ